



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԸԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
NATIONAL  
LIBRARY  
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է  
Հայաստանի ազգային գրադարանի  
թվային շտեմարաններում՝ համաձայն  
դրա իրավատիրոջ հետ կնքած  
Համագործակցության պայմանագրի, և  
կարող է օգտագործվել բացառապես  
օրենքով նախատեսված կարգով՝  
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ  
հեղինակային իրավունքները**

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ

28

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

9(47.925)

Ս-98

9(47.925)

Ս-98

5 OCT 2011

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ

28

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 2005

Նվիրվում է Մեծ Եղեռնի  
90-րդ տարելիցին  
1915 - 2005

Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք,  
Թող ողջ աշխարհ հայուն կարդա նախատիւնը:

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ



830-2005

ԵՐԿՈՒ ԽՈՍԹ

Ամեն ժամանակաշրջան պահանջում է, հատկապես այն գրականությունը, որը պետք է ստեղծվի, որպեսզի բացահայտվի ու ձևակերպվի տվյալ իրականության ու ժամանակի ոգին: Միլվա Սուքիասյանի արվեստաբանական երկու պրակները («Արամ Իսաբեկյանի գույները...», «Մի կաթիլ բարություն»), և կրոնա-եկեղեցական վեց հատորները («Նվիրական ուխտյալներ», «Պատիվ արեք հայոց վեհափառներին», «Հայոց հայրապետ, ընտրեալդ Աստծո...», «Նավասարդ սրբազանի հոգևոր կտակը», «Խորհրդանիշ մտքի և խղճի», «Մի դափնեճյուղ Վազգեն Առաջինի հիշատակին»), ինչպես նաև «Հայոց 28 մայրաքաղաքները» գրքույկը, վերը նշվածի աներկբա հաստատումն է:

«Ամեն մեկն ունի կյանքի իր ճշմարտությունը, որին հավատում է: Ինչ որ անում եմ, անում եմ հույզի անկեղծ թրթիռով, – ասում է Միլվան և ավելացնում, – իմ քաղաքական հավատո հանգանակը անկեղծ գրույցն է մեր օրերի ու ժամանակակիցների հետ: Իսկ դա հենց ոգու հայտնությունն է: Ես այդ հայտնության տերն եմ»:

Միլվա Սուքիասյանը ճանաչված է որպես գրող-հրապարակախոս, որի հանդեպ սերն ու ակնածանքը խաչածևվել են՝ պարզևեղով նրան ներհուն մշակի համբավ, քանզի նա պաշտպանում է այն տեսակետը, թե՛ «պատմությունը պետք է լինի ճշմարիտ, և պատմիչը՝ ճշմարտապատող»:

Հեղինակի շուրջ 20 տարվա ուսումնասիրությունը (օգտվել է արխիվային փաստաթղթերի հավաքածուներից, որոնք պահպանվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, Հայաստանի ազգային արխիվում, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության մատենադարանում, ոչ միայն հայոց 28 մայրաքաղաքների մասին է, այլև մեր ժողովրդի պատմության, գրականության, ճարտարապետության, հասարակական-քաղաքական մտքի և կուլտուրայի վերաբերյալ: Ինչպես հեղինակն է նշում. «Հասարակական-քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Հայաստանն ունեցել է բազմաթիվ մայրաքաղաքներ: Օտարներն այն անվանել են «Թափառող մայրաքաղաքների երկիր» (Է. Ռեկլյու): Պատմագիտության մեջ հիշատակվում են հիմնականում 12-13 մայրաքաղաքներ: Նույնիսկ ամենավերջին հրապարակումներում այդ քանակը պահպանված է: Բայց իմ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի մայրաքաղաքների թիվը, սկսած Հայկյան Մեծ քվականից՝ 4497-4498, գրեթե կրկնապատիկ է, որոնցից մի քանիսը՝ վասալական և կիսանկախ թագավորությունների մայրաքաղաքներ են: Ուսումնասիրության նպատակն է համայրել այս ցանկը, պատմական միակնարկով վեր հանել միմյանց հաջորդող մայրաքաղաքների դերն ու նշանակությունը, ինչպես նաև՝ ճակատագիրը»:

Պատահական չէ, որ ռուս մեծ բանաստեղծ Վլադերի Բրյուսովը 1916թ. գրել է. «Հայերն առավել մեծ իրավունք ունեն ինչպես մեր, այնպես էլ աշխարհի ուշադրությանն արժանանալու. այն բարձր մշակույթի, որ հայ ժողովուրդը ստեղծել է իր ինքնուրույն գոյության երկար դարերի ընթացքում, և այն բացառիկ հարուստ գրականության

ստեղծման համար, որը Հայաստանի անգնահատելի լուծման է մարդկության ընդհանուր գանձարանում»:

Միվա Մուքիասյանը քնության է առել հայ և օտար պատմիչների, ճանապարհորդների, աշխարհագրագետների վկայությունները, բաղդատել միմյանց հետ և համոզիչ փաստերով հաստատել հինավուրց մայրաքաղաքների ծնունդը, ծաղկումը, նաև ողբերգական կործանումը: Հեղինակը հաղթահարել է դժվարին և անհրաժեշտ պարտք, այն է՝ բնավ ճշմարտությունից չհեռանալով՝ պատմական փաստերը ներկայացնել այնպես, որ հայ ընթերցողը ոչ միայն ճանաչի իր մայրաքաղաքները, այլև հպարտանա նրանցով:

Շնորհալի հեղինակը ոչ միայն հայոց մայրաքաղաքների պատմությունն է պեղել, այլև հարություն է տվել արքունի դյուցազուններին:

Գրքի իրականացումը մեր բոլորի ոսկեդեն երազն է:

Հովհաննես Մուրադյան

«ՀԱՅԸ ՊԻՏԻ ԱՊՐԻ՝  
ՀԱԿԱՌԱԿ ԴԱՀԻՃՆԵՐՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿ ԻՐ  
ԱՌՅՈՒԾԻ ԱՉՔԻՆ ՏԱԿ ԲՈՒՍԱԾ ԿՈՐԵԿԻՆ»

«Թեպետ և ենք ածու փոքր և թուով յոյժ  
ընդ փոքու սահմանեալ և գոյութեամբ  
տկար և ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ  
թագատրութեամբ, սակայն բազում գործք  
այութեան գտանին գործեալ և ի մերում  
աշխարհիս և արժանի գրոյ յիշատակի»:  
Մովսէս Խորենեցի

Ազգերը ստեղծել և ստեղծում են հոգևոր արժեքներ,  
որոնք նրանց հոգեկան կերտվածքի, ստեղծագործ մտա-  
տիպարների ու հավաքական իմացականության դրսևո-  
րումներ են: Հայ ժողովուրդը դարեր շարունակ մաքառե-  
լով ապրել է, որովհետև տեր է կանգնել անցյալին, ժա-  
ռանգությանը, որտեղ վերընձուղվել է իր ժողովրդի կու-  
տակած իմաստությունն ու ամբողջ հոգևոր հարստութ-  
յունը: Մինչդեռ այդ անցյալի պատկերը, որից ծորում են  
նախնայաց արյան կաթիլները, իր ապագայի գրավա-  
կանն է:

Հայ և օտար երախտաշատ մատենագիրներն ու  
պատմիչները անհուն սիրով են գովերգել ու փառաբանել  
հայ շինարար արքաների ու իշխանների մտքի ու ոգու  
հանճարը, որը հավերժական հողի վրա արձակեց «ի  
սկզբանե եղած բանը» ավիշով սնվող տոհմաժառի ար-

մատները: Հայ ժողովրդի փառապանծ մշակույթի գան-  
ձարանում, անտարակույս, իր ուրույն տեղն է գրավում  
ճարտարապետությունը:

Արդարև, հայոց ճարտարապետությունը մեր ժողովր-  
դի խիղճն է ու պատիվը, նաև հոգու զրահավորյալ մար-  
տիրոսը, ոգի, որն այնքան հարազատ է, որ նույնիսկ հայ  
մարդը իր դժբախտ օրը լավիս իրեն համեմատում է  
ավերված տան հետ՝

Սիրոս մման է էն փլած տներ,  
Կտորեր գերաններ, խախտեր է սներ..

Մեծատաղանդ ճարտարապետ, հնագետ Թորոս Թո-  
րոմանյանը հայ ճարտարապետության հինգհազարամ-  
յա հասակը բաժանում է չորս վերածնունդների: Առաջին  
վերածնունդը ձգվում է մինչև 5-րդ դարը: Հայ ճարտա-  
րապետության «ոսկեդարը» 7-րդ դարն է:

Մտավոր-մշակութային իմաստով հետաքրքրական և  
հարուստ շրջան է 10-րդ դարը, երբ ճարտարապետու-  
թյունը նոր՝ 3-րդ վերածնունդ է ապրում: 4-րդ վերածնուն-  
դը 12-14-րդ դարերն են, որի մասին Թորոմանյանը գրում  
է. «Չորրորդ վերածնությունից մեզ ժառանգություն են ոչ  
միայն շինարարական կատարելություններ, այլև ոճերու  
այնպիսի նշանակալից ու հանդուգն ձևակերպումներ,  
որոնց համար մենք միշտ հպարտ պիտի լինենք»:

Հիմնականում այս շրջանում են ժանյակագործվում  
համաշխարհային հռչակ ստացած հայոց խաչքարերը:  
Հայոց մշակույթի երկար ու ձիգ ճանապարհին, ամե-  
նայն իրավամբ կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը,  
հակառակ իր պատմական դառն ճակատագրին, թողել է  
այսօր էլ աշխարհին հիացմունք պատճառող մշակույթի

զարմանահրաշ գոհարներ և ուսանելի, ընդօրինակելի ճարտարապետական հուշարձաններ: Այս ճշմարտությունը ընդունել են նաև օտար հայագետներ, ճանապարհորդներ, մատենագիրներ ու աշխարհագրագետներ:

Ահավասիկ, ըստ Յոզեֆ Ստրժիգովսկու (Վիեննայի համալսարանի պրոֆեսոր), Վարդ Արսլանի (խալացի արվեստաբան, պատմաբան, գրականագետ, բժիշկ, աշխարհագրագետ) և ուրիշ հետազոտողների, Բագարանի ս. Թեոդորոս եկեղեցին, որ ճարտարապետական ոճով նման է Էջմիածնի Մայր տաճարին, Բյուզանդիայի միջոցով տարածվել է Եվրոպայում և գտել զարգացում: Այդպիսի նախատիպ է Ֆրանսիայում՝ Օռլեանի Ժերմինյի դը Պրե (806-811), Միլանի Սան Սատիրո (868-888) Հունաստանի Աթոս լեռան Մեծ Լավրա (963-1004) և այլ կառույցներ:

Հատուկ հոդվածներ ու աշխատություններ է գրել համաշխարհային ճարտարապետության հմուտ մասնագետ Շուազին: Նա, խոսելով հայ ճարտարապետության մասին, գրում է. «Դանուբի հովտի մեջ՝ Սերբիա, Ռումինիա, Մոլդավիա, հայկական զարդաքանդակների հատկանիշն է, որ դրոշմված է մինչև այսօր... Քուրթեա դ'Արճեշի, Թեկովիցի, Տրակոմիրայի եկեղեցիների վրա չկա մի զարդաքանդակ, որ Հայաստանին չպատկանի: Չարդաքանդակների ճարտարապետության տեսակետից Դանուբի հովտը հայկական գաղթավայրի է նման»:

Ֆրանսիացի ճարտարապետ Տեքսիեն մի քանի ամիս Հայաստանում ուսումնասիրություններ կատարելուց հետո ի լուր աշխարհի հայտարարեց, որ պայտաձև աղեղները հայ ճարտարապետության սեփականությունն են: Էլ ավելի խորը վերլուծումներ ենք գտնում գերմանացի ճարտարապետ Պաուլ Ֆրանկի 1967թ. հրատարակած

աշխատությունում, որը ռոմանական ճարտարապետության վրա ազդեցությունների խնդիրը քննելիս, խոսքը մասնավորեցնելով Պիզայի հուշարձանների խմբին (մկրտարանը, կաթողիկեն, աշտարակը, գերեզմանատունը), գրում է. «Եթե աչքի առաջ ունենաք 7-10-րդ դարերի հայկական ճարտարապետությունը, ապա պարզ կլինի, որ հետագա դարերում կառուցված եվրոպական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Կանտուի Գալինոյի մկրտարանը՝ իր եռանկյունաձև խորշերով ու երկրորդ հարկով և Բիելլայի մկրտարանը՝ իր փոքր վերահարկով, իրոք որ պետք է համարել հայկական արվեստից փոխադրված կամ ուղղակի սերված կառույցներ»:

Տեղին է հիշել նաև մահմեդական արվեստի գիտակ Գ. Միժոնիի դիտարկումները, որի կարծիքով՝ Գոնիայի Ալայեղդիմի հռչակավոր մզկիթը զարդարված է մեծ մասամբ հայկական զարդաքանդակներով, իսկ ներսը՝ հայկական ութանկյուն կաթողիկեի գմբեթներով է կառուցված:

Իր անթաքույց սերն ու համակրանքն է արտահայտել հայ ժողովրդի մեծ բարեկամ անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնը. «Գուցե դժվար կլինեք որևէ այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիրներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, — իսկ դա անցյալում շատ դառն է եղել, — ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքրական երկրներից մեկը»:

Հայ իմաստուն ճարտարապետները բնության ու տիեզերքի խորախորհուրդ գաղտնիքները մեկնելով՝ հա-

յոց մայրաքաղաքները կառուցել են երկունքով, տանջանքով, ոգևորությամբ ու ցնծությամբ:

Մինչդեռ հինգիսկարամյա պատմության ընթացքում, սկսած Հայկ Նահապետից մինչև մեր օրերը, նշանավորվեցին պատերազմների ու հեղափոխումների, աննախադեպ աղետների ու ավերածությունների, հույսերի ու սպասելիքների դրամատիկ ու ծայրահեղ վիճակներով: Չկան այսօր հայոց 28 մայրաքաղաքները, բայց կա հայ ժողովուրդը՝ իր ոգու անհեղելի կնիքով, քանզի բեղուն է նրա արգանդը: Այն ձևավորել է Հայկ Նահապետը, ակոսել է Մեսրոպ Մաշտոցը, հունձք են արել Եղիշեն, Վարդանը, Նարեկացին, Մեծն Ներսեսը, Կոմիտասը, Խաչատրյանը, Համբարձումյանը... Զանի մեր ունկերին կհնչեն Պատմահոր հրեղեն խոսքերը, որ մեջ ենք բերել որպես բնաբան, մենք կլինենք, կստեղծագործենք մեր ոգու նմանությամբ, որից՝ «մարդու ստեղծարար հանճարի այս քարաստան երկրում փայլատակած ճառագայթներից տաքացել է նաև Եվրոպան», Երևանը՝ իր տասներկուամյա որդով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտով, կլինի մեր նոր Վանը:

## ՏՈՒՇՊԱ - ՎԱՆ

Մ.թ.ա. 9-րդ դարի կեսին Վանա լճի արևելյան շրջանում, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Տոսպ գավառում կազմավորվում է Հայկական լեռնաշխարհի հնագույն պետությունը, որն ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է Ուրարտու, իսկ Աստվածաշնչում՝ Արարատի երկիր: Մայրաքաղաքն էր Տուշպան, որը հետագայում անվանվեց Վան: Այն հիմնադրել է Մարդուր Ա-ն:

Ուրարտական պետության մասին մեզ կարևոր տեղեկություններ են հաղորդում ասորեստանյան և հատկապես ուրարտական սեպագիր արձանագրությունները: Տուշպան հայտնի էր իր անառիկ բերդով, տաճարներով, հացահատիկի, մթերքի ու զենքի պահեստներով: Զաղաքին խմելու և ոռոգման ջուր էր մատակարարում մ.թ.ա. 9-րդ դարի վերջին կառուցված և մինչև օրս գործող մոտ 80 կմ երկարություն ունեցող Մենուայի ջրանցքը:

Ըստ Ղուկաս Ինճիճյանի (աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր)՝ 19-րդ դարի սկզբում գործում էին 8 եկեղեցի (ս. Տիրամայր կամ ս. Նշան, ս. Պետրոս, ս. Պողոս, ս. Էջմիածին, ս. Ստեփանոս, ս. Վարդան, ս. Սահակ, ս. Ծիրանավոր): Տուշպա-Վանը հնագույն ժամանակներից մինչև 1915թ. հայաբնակ էր: Մեծ եղեռնի հետևանքով այն դատարկվեց բնիկներից:

## ԱՐՁԱՍԿՈՒՆ

Արածանիի հովտի և Վանա լճի միջև էր գտնվում Արգասկուն, որը Արարատյան երկրի Արամ քաղաքի (Արա Գեղեցիկի հայրը) մայրաքաղաքն էր (Արամի անունով, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, հարևան ժողովուրդները երկիրն անվանում են Արմենիա): Արգասկուն կառուցված է եղել բլրի վրա և ունեցել պաշտպանական աշտարակներով բարձր և ամուր պարիսպներ: Ատրեստանի քաղաքը Սալմանասար III-ը մ.թ.ա. 858թ. հարձակվելով՝ պաշարում է քաղաքը: Արգասկուն քաղաքը Արգասկուն: Արամն իր գորքով քաշվում է Արգասկունի մոտ գտնվող բլուրը՝ ճակատամարտում ավելի նպաստավոր դիրք գրավելու համար: Ըստ Սալմանասարի արձանագրության՝ բլրի վրա տեղի է ունենում ահեղ ճակատամարտ. «Ուրարտացի Արամի քաղաքները, մինչև Եփրատ գետի ակունքը, ավերեցի, քանդեցի, հրով այրեցի»:

## ԱՐՄԱՎԻՐ

Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի՝ Հայկ Նահապետի թոռ Արամայիսը բնակության համար տուն է շինում գետի ափին, մի բլուրի վրա, և իր անունով այն կոչում Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան՝ Երաստի անունով կոչում է Երասխ: Մ.թ.ա. 4-րդ դարի վերջին Արմավիրը դարձել էր Արարատյան հայկական քաղաքության առաջին մայրաքաղաքը, որտեղ հաստատվել էին Երվանդունիները:

Մ.թ.ա. 189թ., երբ Արտաշես Ա-ն հիմնադրեց Մեծ Հայքի քաղաքությունը, Արմավիրը դարձավ նրա մայրաքաղաքը: Արմավիրը հայտնի էր իր պալատական շենքով, տաճարներով, զորանոցներով: Քաղաքի շրջակայքում կային խաղողի և մրգատու ծառերի այգիներ: Քաղաքի մերձակայքում էր գտնվում Արամանյակի սուսյաց անտառը:

## ԵՐՎԱՆԴԱՇԱՍ

Երվանդ Դ-ն մ.թ.ա. 3-րդ դարի վերջին-2-րդ դարի սկզբին Արաքս և Ախուրյան գետերի միախառնվելու վայրին մոտ կառուցում է մի նոր քաղաք ու իր անունով կոչում Երվանդաշատ: Ըստ Մովսես Խորենացու՝ Երասխի հունը Արմավիրից հեռանալու պատճառով Երվանդ Դ-ն գետահունով երեք կողմից պատված բլրի վրա հիմնել է Երվանդաշատը և արքունիքը տեղափոխել այնտեղ: Միջնաբերդը կառուցվել է միակտուր ժայռի վրա: Պարսպապատ բլրի ստորոտից մինչև բերդ փորվել են ջրառատ ուղիներ: Միջնաբերդը նույնպես ամրացվել է բարձր պարսպով և մետաղակուռ դարպասով: Բերդի մուտքերը տանող երկաթե սանդուղքների մեջ դրվել են քողարկված որոգայթներ: Քաղաքը 4-րդ դարի կեսին ունեցել է ավելի քան 50.000 բնակիչ: Երվանդաշատը 360-ական թվականներին կործանել են Շապուհ Բ-ի զորքերը:

## ՄԱՄՈՍԱՍ

Մ.թ.ա. 330թ. հետո Սամոսատ Ա թագավորը Երվանդունիների Ծովք-Կոմագենե թագավորության մայրաքաղաքն է դարձրել Եփրատ գետի աջ ափին գտնվող հնագույն քաղաքներից մեկը և իր անունով վերանվանել Սամոսատ: Մ.թ.ա. 3-րդ դարի վերջին Սամոսատը կարճ ժամանակով ենթարկվել է Սելևկյաններին, ապա դարձել Կոմագենե անկախ պետության մայրաքաղաքը: Տիգրան Բ Մեծի և Արտավազդ Բ-ի օրոք (մ.թ.ա. 1-ին դար) այն մտել է Մեծ Հայքի թագավորության մեջ: Սամոսատը եղել է հունական դպրության կենտրոն: Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների խմբին ուղարկել է Սամոսատ՝ ուսանելու, այնուհետև անձամբ այցելել և հույն գեղագիր Հռոփանսի օգնությամբ վերջնականորեն ձևավորել է հայկական նշանագրերը: 72-ին Հռոմեական կայսրությունը Սամոսատը կցել է իր տիրապետության տակ գտնվող Ասորիք նահանգին: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի 2-րդ կեսից մինչև 1915թ. Սամոսատի բնակիչները եղել են հայեր:

## ԵԴԵՍԻԱ

Քաղաքը գտնվում է Միջագետքի հյուսիս արևմուտքում, Եփրատի վտակ Դայսան գետի վրա: Մ.թ.ա. 312-մ.թ. 216թթ. Օսրոյենեի (նրա թագավորները հայեր էին) թագավորության մայրաքաղաքն էր: 216-ին Հռոմի Կարակալա կայսրը գահընկեց արեց Օսրոյենեի վերջին թագավոր Աբգարին և Եդեսիան դարձրեց հռոմեական գաղութ: Քաղաքն ուներ գեղեցիկ դիրք, շրջապատված էր ավաններով: Ներսես Շնորհալին իր «Ողբ Եդեսիո» պոեմում վառ գույներով է ներկայացրել նրա ամուր, բարձր պարիսպները, շուկաները, տները: 12-րդ դարի արաբ պատմագիր Իբն ալ Ասիրի հավաստմամբ՝ Եդեսիան ամբողջությամբ հայերով էր բնակեցված: 1144-ին Եդեսիայում ապրում էր 47.000 հայ բնակչություն: Ս. Աստվածածին եկեղեցին արքեպիսկոպոսի նստավայրն էր՝ կից վարժարանով, որտեղ սովորում էր 1140 աշակերտ: Ս. Սարգիս վանքում գործում էր որբանոց: 1835-ին, հայկական կոտորածների ժամանակ, թուրք կանոնավոր զորքն ու բաշիրոզուկները խաբեությամբ մտել են քաղաք, կոտորել անգեն մարդկանց: 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ բնակիչները դիմել են ինքնապաշտպանության: Թուրք ջարդարարներին մեծ կորուստներ պատճառելով՝ հեռացել են, բայց մեծ մասը զոհվել է Դեյր էլ Չորի անապատում: Կենդանի մնացածներն ապաստան են գտել Հալեպում:

## ԱՐՇԱՍԱՇԱՍ

Մ.թ.ա. 240թ. Մամոսատի որդի Արշամը, Մեծ Հայքի Ծովք նահանգում, Արածանի գետի և Արևմտյան Տիգրիսի միջև գտնվող դաշտում հիմնադրել է Արշամաշատ մայրաքաղաքը: Արշամը խրախուսել է առևտուրը, հատել դրամ: Արշամի մահից հետո, 220թ., Սելևկյանները, Ծովքի թագավորությունը թուլացնելու նպատակով, անջատում են Կոմագենը: 114թ. Տրոյանոսը իր զորքերով մտնում է Ծովք, գրավում այն իր մայրաքաղաքով, հետո նվաճում ամբողջ Հայաստանը: Այժմ նշմարվում են ավերակները:

830-2005



## ԱՐԿԱԹԻԱԿԵՐՏ

Չարեհին հաջորդել է Արկաթիաս թագավորը, որը հիմնել է Արկաթիակերտ մայրաքաղաքը: Քաղաքը գտնվում էր Տիգրիսի ափին: Մ.թ.ա. 3-րդ դարի վերջին և 2-րդ դարի սկզբին Ծոփքի թագավորության մայրաքաղաքը՝ Արկաթիակերտը, առևտրի ու արհեստագործության կենտրոն էր: Արկաթիաս թագավորը սպանվել է Սելևկիայի Անտիոքոս 4-րդ թագավորի՝ Եպիփանեսի դեմ կռվում: Գահն անցել է Արկաթիասի եղբորը՝ Մերուժանին, իսկ նրանից հետո՝ Արտանեսին: Արկաթիակերտի մասին հետագա աղբյուրներում այլ տեղեկություններ չեն հանդիպում:

## ԱՐՏԱՇԱՍ

Մ.թ.ա. 2-րդ դարում Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ոստան հայոց գավառում Արտաշես Ա-ն կառուցել է Արտաշատ մայրաքաղաքը: Արտաշատը եղել է առևտրի, արհեստների հելլենիստական խոշոր կենտրոն: Ըստ Պլուտարքոսի՝ մ.թ.ա. 53-ին, Արտավազդ Բ-ի օրոք, Արտաշատում ներկայացրել են Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Քաղաքը հայտնի է եղել իր կառույցներով և ճարտարապետական կոթողներով: Այն ունեցել է պարիսպներից ու պատվարից կազմված պաշտպանական ընդարձակ համալիր և միջնաբերդ՝ արքունական պալատով: Հայ և օտար աղբյուրները միաբերան ընդգծում են Արտաշատի մեծությունը և գեղեցկությունը, իսկ ըստ Մովսես Խորենացու՝ Արտաշեսի օրոք Արտաշատում կառուցել են Անահիտ (մայրության և գեղեցկության) ու Տիր (գիտության և դպրության) աստվածների տաճարները՝ նրանց պղնձաձույլ արձաններով: Արտաշատը հին աշխարհի միջազգային առևտրի գլխավոր կենտրոններից էր: Քաղաքով անցնում էր Հեռավոր արևելքից դեպի Միջերկրականի ափերը ձգվող տարանցիկ առևտրական ճանապարհը, որով փոխադրում էին չինական մետաքս և այլ ապրանքներ: 368թ. պարսից Շապուհ Բ-ն, Հայաստանի այլ քաղաքների հետ, զգալիորեն ավերել է նաև Արտաշատը, գերեվարել բնակչությանը:

## ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Նփրկերտ գավառում: Տիգրան Բ Մեծ թագավորը մ.թ.ա. 80-70-ական թվականներին Աղձնիք նահանգում հիմնադրում ու կառուցում է մայրաքաղաք, որն իր անունով կոչում է Տիգրանակերտ: Քաղաքը շրջապատված էր բարձրաբերձ պարիսպներով, որոնք ունեին 50 կանգուն բարձրություն: Այդ պարիսպներն այնքան լայն էին, որ նրանց մեջ Տիգրանը շինել էր տվել ձիերի ախոռներ, պահեստներ: Քաղաքն ուներ ամուր և անմատչելի միջնաբերդ: Միջնաբերդից դուրս կառուցված էր Տիգրանի փառահեղ պալատը, որը շրջապատված էր պարտեզներով, որսատեղերով, ձկնավազաններով: Տիգրանակերտը եղել է նաև մշակութային խոշոր կենտրոն: Գործել է նաև թատրոն: Տիգրան Բ Մեծի մահից հետո (մ.թ.ա. 55թ.) դադարել է մայրաքաղաք լինելուց:

## ՄԾԲԻՆ

Քաղաքը գտնվում էր Հայոց Միջագետքում, Խարուր գետի Ջախջախ վտակի ափին: Պատմիչ Լեոն հիշատակում է, որ հայկական գահի վրա (78-110) նստած էր զտարյուն մի Արշակունի՝ Սանատրուկ անունով: Նա իր արքունիքը հաստատում է Մծբին քաղաքում, որը դեռևս Տիգրան Բ Մեծի օրոք (մ.թ.ա. 95-55թթ.) մտնում էր հայկական պետության մեջ և վերջինիս աթոռանիստերից էր, որտեղ պահվում էր նրա գանձերի մի մասը:

1915թ. Մծբինի հայերը, որ ունեին իրենց արհեստանոցները, խանութները, եկեղեցիները և դպրոցը, ենթարկվեցին թուրքերի բռնություններին: Նրանց մի մասը ոչնչացավ, մյուս մասը տարագրվեց զանազան երկրներ:

## ՄԾՈՒՐՆ

Տուրուբերան նահանգի Տարոն գավառի արևմտյան կողմում, Արածանիի և Մեղրագետի միախառնման վայրին մոտ Սանատրուկ թագավորը (78-110) հիմնում է նոր մայրաքաղաք՝ Մծուրնը: Քաղաքը հայտնի էր իր արհեստներով, առևտրով: Մծուրն մայրաքաղաքում կառուցված են եղել թագավորական և իշխանական պալատներ ու պաշտպանական նշանակություն ունեցող ամրություններ, ինչպես նաև, ըստ Մեբեոսի, Մծուրնում է ապրել և գործել Մար Աբաս կատինան, որը հայոց պատմագրությանը մեծ ծառայություն է մատուցել: Հավանաբար ավերվել է 4-րդ դարի երկրորդ կեսին՝ Սասանյան Շապուհ Բ թագավորի արշավանքների հետևանքով:

## ՎԱՂԱՐՇԱՊԱՍ

Պատմահայր Մովսես Խորենացին հաղորդում է, որ մ.թ.ա. 6-րդ դարում Հայոց Երվանդ Ա Սակավակյաց թագավորի փեսան՝ Վարդգես Մանուկը, կառուցել է ավան և անվանել Վարդգեսավան, Հայոց Վաղարշ Ա թագավորն այն պարսպապատել է, կառուցապատել, վերանվանել Վաղարշապատ և դարձրել իր մայրաքաղաքը: Քաղաքի նշանակությունը հատկապես մեծացավ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելուց հետո: 164թ. մինչև 5-րդ դարի երկրորդ կեսը Վաղարշապատը մնում է որպես երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոն: Վաղարշապատը, հատկապես 13-15-րդ դարերից, տաճարի անունով կոչվել է նաև Էջմիածին:

Հեռավոր անցյալի պատմաբանները ազգերի ճակատագիրն առաջնորդող մտքերը, մշակույթի, քաղաքակրթության ամենափայլուն շրջանները «Ոսկեդար» են կոչել: Հայոց «Ոսկեդարը» սկսվել է հայ գրերի գյուտով՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից: 5-րդ դարից հենց միայն առաջին տասնամյակում թարգմանվեցին ու գրվեցին տասնյակ գրքեր, որոնցից 41-ը հասել են մեզ: Դրանց թվում են Աստվածաշունչ մատյանը, որը ֆրանսիացի բանաստեղծ Մաթյուրեն Վեյսին Լակրոզը «թագուհի թարգմանութեանց» անվանեց: 5-րդ դարից ճարտարապետական մտքի զարգացումը հանգում է կենտրոնա-

գմբեթ տաճարների ստեղծմանը և բազիլիկների գմբեթավորմանը, որը նոր խոսք ու որակ էր հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ: Տաճարների գմբեթավորման առաջին օրինակներից է Էջմիածնի Մայր տաճարը: 7-րդ դարում կառուցվել են Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ եկեղեցիները և Ջվարթնոց տաճարը: Վաղարշապատում 7-րդ դարի կեսերից սկսած առժամանակ կասեցվում է Վաղարշապատի մշակութային կյանքը արաբական արշավանքներով ու ավերումներով: Անշուք վիճակը շարունակվում է մինչև 15-րդ դարի կեսը, երբ Հովհաննես Հերմոնեցու և Թովմա Մեծոփեցու ջանքերով 1441թ. գումարված Էջմիածնի Ազգային ժողովը Ամենայն Հայոց կաթողիկոսությունը վերահաստատում է Վաղարշապատում, որը կրկին դառնում է համայն հայության հոգևոր կենտրոնը և Հայոց կաթողիկոսական աթոռանիստը, որպիսին մնում է առ այսօր (ներկայիս ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ.Տ. գարեգին Բ-ն Էջմիածնում նստած կաթողիկոսներից 60-րդն է:

## ԴՎԻՆ

Այրարատ նահանգի Ոստան գավառում էր գտնվում Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից մեկը՝ Դվինը: Քաղաքը հիմնադրել է 4-րդ դարի 30-ական թվականներին Հայոց Խոսրով Կոտակ թագավորը: Նա Դվին բլրի վրա կառուցել է արքունի ապարանքներ և արքունիքը Արտաշատից տեղափոխել այնտեղ: Դվինում կառուցվել են վեհարան, պաշտոնատներ, բարձրագույն դպրանոց և այլ շենքեր: Էջմիածնից կաթողիկոսական աթոռը (484-931) տեղափոխվել է Դվին: Դվինի մերձակայքում տնկել են անտառ-որսատեղի: 7-րդ դարից սկսած՝ քաղաքը ենթարկվել է արաբների արշավանքներին: Դվինը վերջնականապես կործանվել է Ջալալ էդ Դինի արշավանքների հետևանքով:

## ԲԱԳԱՐԱՆ

Քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառի հյուսիսարևելյան մասում, Ախուրյան գետի աջ ափին: Բագարանը կառուցվել է Երվանդ Դ թագավորի կողմից մ.թ.ա. 2-րդ դարի սկզբին: Սակայն հետագայում Բագարանը կորցրել է իր երբեմնի քաղաքական ու տնտեսական դերը: Միայն 9-րդ դարում, երբ Աշոտ Բագրատունի Մսակերը գնեց Կամսարականների տիրույթները, Բագարանը դարձավ նախարարական ուստան: 9-րդ դարի վերջին Բագարանը դարձավ Բագրատունիների նորաստեղծ պետության մայրաքաղաքը: 1048թ. Բագարանը զավթեցին սելջուկ-թուրքերը, քաղաքը ավերեցին, իսկ հայ բնակչությանը կոտորեցին: Վերաշինվել և բարգավաճել է Չաքարյանների օրոք (13-րդ դարի սկզբին): Կառուցվել են բրգավոր բերդապարիսպներ, եկեղեցիներ (ս. Գևորգ և ս. Թեոդորոս, ս. Շուշանիկ), խաչքարեր: 14-րդ դարի վերջին Բագարանը վերջնականապես ամայացրել են Լենկթեմուրի հորդաները:

## ԵՐԱՉԳԱՎՈՐԱ

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գավառում Բագրատունիների արքայանիստ քաղաքն է եղել Երազգավորսը (890-914): Պատմիչ Վարդան Արևելցին հաղորդում է, որ Մմբատ Ա Բագրատունին Երազգավորսում կառուցել է ս. Փրկիչ եկեղեցին և այնտեղ օծվել: Ավելի ուշ կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին: Քաղաքը հայտնի էր իր ճարտարապետությամբ, մշակույթով: Ենթադրվում է, որ սելջուկ-թուրքերի 1064թ. արշավանքների ժամանակ Անիի հետ ավերվել է նաև Երազգավորսը կամ, ինչպես հետագայում է կոչվել, Շիրակավանը:

## ԿԱՐՍ

Քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գավառում, Ախուրյանի վտակ կարս գետի աջ ափին:

Աշոտ Բ-ից հետո գահ է բարձրանում նրա եղբայրը՝ Աբասը, որը Բագրատունիների արքունիքը Երազգավորսից տեղափոխում է Կարս (929թ.): 961թ. Աշոտ Գ-ն արքունիքը Կարսից տեղափոխում է Անի, որն այդ ժամանակից սկսած դառնում է Հայաստանի նոր մայրաքաղաքը: Սակայն Աշոտ Գ-ի եղբայրը՝ Մուշեղը, որ այդ ժամանակ վարում էր սպարապետի պաշտոնը, 963թ. հրաժարվում է ենթարկվել Աշոտին, Վանանդը անջատում է մայր թագավորությունից, իրեն հայտարարում թագավոր և կարսը դարձնում է իր մայրաքաղաքը:

Քաղաքը քարե պարիսպներով ամրացված բնակավայր էր, ուներ պալատով միջնաբերդ, արվարձաններ: Դոյակածն բազմահարկ պալատը (պայթեցվել է 1829թ.) գտնվում էր միջնաբերդի բարձրադիր՝ հյուսիսարևմտյան կողմում: Տները հիմնականում երկհարկ, սակավ՝ եռահարկ էին, ունեին խանութներ, արհեստանոցներ: Առանձնանում էին իջևանատները, բաղնիքները, եկեղեցիները (ս. Նշան, ս. Աստվածածին, ս. Գրիգոր):

Արաբ աշխարհագրագետ Յակուտը նշում է, որ Կարսից արտահանվել է մետաքս: 11-րդ դարում այնտեղ գործել է բարձրագույն դպրոց՝ վարդապետարան: 1394-

ին քաղաքը գրավել և ավերել է Լենկթեմուրը: 1548թ. Օսմանյան Թուրքիան գավթել է Կարսը: 1828-ին ռուսները գրավեցին այն և միացրին Արևելյան Հայաստանին: 1918թ. ապրիլի 25-ին Կարսը գրավեցին թուրքերը՝ բնակչությանը ենթարկելով բռնության և կոտորածների: 1921թ. Կարսի պայմանագրով քաղաքն անցավ թուրքերին:

Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին: 10-11-րդ դարերում եղել է Բագրատունիների թագավորության մայրաքաղաքը: Պատմիչները Անին անվանել են «տիեզերական»: Այդ անվանը արժանացել է իր հույակերտ կառույցներով՝ պալատներով, տաճարներով, կամուրջներով: Թշնամիների հարձակումից քաղաքը պաշտպանված է եղել երկու ամրակուռ պարիսպներով, որոնք կառուցող արքաների անուններով կոչվել են Աշոտաշեն և Սմբատաշեն: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր էր Անիի Մայր տաճարը, Գագկաշեն, Արուղամբենց եկեղեցիները:

Հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին Անին անվանել է «հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»: Անիում զարգացած են եղել մոտ չորս տասնյակ արհեստներ: Եղել է հայ գրչության կենտրոն, գործել է արքայական գրադարան: Սմբատ թագավորի օրոք կառուցվել է ջրանցք, որով ջուր է մատակարարվել մայրաքաղաքին և նրա շրջակայքի այգիներին: 1044թ. Բյուզանդիայի կայսր Մոնոմախը խաբեությամբ Գագիկ թագավորին հրավիրում է Կոստանդնուպոլիս, ստիպում հրաժարվել թագավորությունից: 14-րդ դարում մոնղոլական և թուրքական ցեղերի պարբերական արշավանքներն այն աստիճան հյուծեցին քաղաքը, որ բնակիչներն աստիճանաբար լքեցին այն ու գաղթեցին օտար ափեր: 1878թ. Անին անցավ Ռուսաստանին: 1920թ. այն անցավ Թուրքիային:

Քաղաքը գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում, Վանա լճի հարավային ափին (Աղթամար կղզու դիմաց): Հին հայկական աղբյուրներում Ոստանը հիշվում է որպես Մեծ Հայքի հարավային զորաթևը գլխավորող Ռշտունյաց նահապետի նստավայր: 10-րդ դարի սկզբին Վասպուրականի թագավոր Գագիկ Ա Արծրունին վերակառուցել է Ոստան քաղաքի բերդի պարիսպները, հիմնել պալատներ ու տաճարներ, սալահատակել քաղաքի փողոցները և այն դարձրել իր գահանիստը: Ոստանի եկեղեցիներից հիշատակվում են ս. Աստվածածինը և ս. Ստեփանոսը: Ստորգետնյա գաղտնուղին բերդից հասնում էր մինչև ս. Ստեփանոս եկեղեցին: Այդ բոլոր կառուցումներից ականատես պատմիչը՝ Թովմա Արծրունին, մանրամասն և պերճակարագրում է Գագիկ Արծրունու կառուցած պալատի մասին. «Արքան ձեռնարկեց նրա մեջ շինել պատկերակերպ ու պես-պես զարդերով հարդարված հրաշալի ապարանքներ, սենյակներ ու փողոցներ: Պարսպեց նաև ծովահայաց կողմը զորավոր վեմերով՝ նրանց հիմքերը դնելով անչափ խորության մեջ, իսկ պարսպի վերևում, ծովի դիմաց, կառուցեց մի ճեմադահլիճ՝ ոսկեզարդ ու բազմագույն ներկերով պանդուկված, արեզակնահրաշճառագայթաձև՝ իր և իրեն արժանիների աչքի խողտանքի և սրտի բերկրության համար: Իսկ դռները կառուցեց

կամարածև, օդաբեր, զովացուցիչ, միաժամանակ նաև լուսնացույց շողախաղաց, որոնց միջով արեգակը, ծագելիս և մայր մտնելիս փայլատակելով ծովի վրա, իր շողերն էր գցում դահլիճի սիրտը, և պատկերաքանդակների ու բազմազան զարդաքանդակների գունախաղն ու երփնափոխությունը հիացնում էր տեսնողներին՝ պատմելու ամեն մի կարողությունից դուրս»:

Մելչուկ-թուրքերի (11-րդ դար) նվաճումներից հետո Ոստանը քանիցս ենթարկվել է ավերածությունների:

1915թ. Մեծ եղեռնի ժամանակ Ոստանի բնակչությունը զոհ է գնացել թուրք կառավարության կազմակերպած ջարդերին:

## ԱՂԹԱՄԱՐ

10-րդ դարի առաջին քառորդի վերջին Գագիկ Արծրունու զլխավորությամբ հաստատվեց Վասպուրականի թագավորությունը՝ Աղթամար մայրաքաղաքով: Աղթամարն իր միջնաբերդով, արհեստական նավահանգստով, Ս. Խաչ եկեղեցիով, որի ճարտարապետն էր Մանուելը, լուռ վկաներն են հայկական միջնադարյան կառուցողական բարձր արվեստի: Աղթամարի մասին ժամանակի պատմիչը հիշատակում է. «Իսկապես որ սա երբեմնի մի ծարավի անապատ էր, իսկ այժմ՝ Մեծն Աստծո քաղաքը, որը երկու մշտաբուխ աղբյուրներից՝ սուրբ ավազանից և Աստծո որդու անապական արյունից գետի պես հոսելով՝ ջուր է տալիս հոգով ծարավներին»: 1425թ. Իսքանդարի զորքերը ավերում են քաղաքը և սրի քաշում այնտեղ ապաստանած բնակչությանը: 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ Աղթամարի բնակչության զգալի մասը գաղթեց Արևելյան Հայաստան: Մնացածները զոհվեցին թուրք ջարդարարների ձեռքով: Աղթամարի շինություններից կանգուն է մնացել միայն ս. Խաչ եկեղեցին (915-921)՝ հայկական ճարտարապետության գոհարներից մեկը:

## ՄԵԲԱՍՏԻԱ

Քաղաքը գտնվում է Փոքր Հայքում, Հալիս գետի աջ կողմում: Այն կարևոր ուղեհանգույց է դարձել Կեսարիա-Արտաշատ, Ամիսոս-Մելիտինե ճանապարհներին: Կոստանդին Ա Մեծի օրոք (335թ.) եղել է Առաջին Հայքի մայրաքաղաքը: Փոքր Հայքի նոր վարչական բաժանմանը (536թ.) Սեբաստիան դարձել է Երկրորդ Հայքի մայրաքաղաքը: 7-րդ դարից եղել է հայոց եկեղեցու թեմական կենտրոն: Սեբաստիայում գործում էին հայկական եկեղեցիներ (ս. Աստվածածին, ս. Մինաս, ս. Փրկիչ, ս. Սարգիս), վանքեր (ս. Նշան, ս. Հրեշտակապետ, ս. Խնդրակատար, ս. Աստվածածին, ս. Հակոբ, Քառասուն մանկունք): 1021-ին Վասպուրականի թագավոր Սենեքերիմ-Հովհաննեսը արքունիքով և զորքով հաստատվել է իր երկրի փոխարեն Բյուզանդիայի կայսրությունից ստացած Սեբաստիայում և նրա շրջակայքում: Թագավորն իր հետ տարել էր նաև Վարագա վանքի հոգևորականներին (զույքով և հարուստ մատենադարանով), որոնք հաստատվել են ս. Նշան նորակառույց վանքում: Հովհաննես արքայից հետո Սեբաստիայում իշխել են Դավիթ, Աբուսահլ, Ատոմ որդիները: 1060-ին Սեբաստիան գրավել է սելջուկ-թուրքերի սուլթան Տուղրիլը: 1895-1896թթ. թուրքական կոտորածների զոհ դարձան հազարավոր սեբաստացի հայեր: 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, նրանց մեծ մասը բռնությամբ քշվեց Դեյր էլ Չոր և ոչնչացվեց:

## ԼՈՌԵ

Գուրգենից հետո, 989թ., Գուգարքի իշխան է դառնում նրա որդին՝ Դավիթ Անհողինը: Նույն թվականին նա իրեն թագավոր է հայտարարում և հիմք դնում Չորագետի կամ Լոռու, իսկ հետագայում՝ Կյուրիկյան թագավորությանը: 1065թ. Կյուրիկե Ա թագավորը Լոռեն դարձնում է Կյուրիկյան թագավորության մայրաքաղաքը: Լոռեում կառուցվում են մի շարք ճարտարապետական արժեքավոր հուշարձաններ: 11-13-րդ դարերում ունեցել է շուրջ 10.000 բնակչություն: 1105թ. Լոռեն կարճ ժամանակով գրավում են սելջուկները, իսկ 1118-ին՝ վրաց գորքերը: 1185թ. Լոռեն պատկանել է Չաքարյաններին: 1236թ. մոնղոլները գրավել և ավերել են քաղաքը, կողոպտել Շահնշահ Չաքարյանի գանձերը, ավերել Դավիթ Անհողինի կնոջը վերագրվող դամբարանը: Հետագայում վերակառուցված Լոռեն անցել է Օրբելյաններին: 1562-1734-ին, որպես ռազմավարական կարևոր ամրոց, անցել է մերթ թուրքերին, մերթ պարսիկներին: Կյուրիկյանները ու Չաքարյանները Լոռեում կառուցել են պալատներ, եկեղեցիներ, կամուրջներ, բաղնիքներ, կերտել խաչքարեր:

## ԿԱՊԱՆ

Կապանը գտնվում է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Չորք գավառում, Կապան (այժմ՝ Ողջի) գետի աջ ափին, բլրի վրա: 9-րդ դարի վերջին-10-րդ դարի սկզբին վերակառուցել ու պարսպապատել է Ջվանշիր Միսակյանի որդի Չագիկ Բ իշխանը: 10-րդ դարի վերջից դարձել է Սյունիքի իշխանանիստը, ապա՝ թագավորության մայրաքաղաքը: 11-րդ դարի վերջին Սյունիքի թագավորությունն ուներ 43 բերդ, 48 վանք: Սյունիքի թագավորության հռչակումից հետո հզորացել է Տաթևի եպիսկոպոսությունը, որը կաթողիկոս Ներսես Ա Մեծից 4-րդ դարի կեսին ստացել է մետրոպոլիտության իրավունք՝ ենթակայության տակ ունենալով 12 եպիսկոպոսություն: 9-րդ դարից Սյունիքի թագավորությունն ապրել է մշակութային վերելք: 895-ին հիմնադրվել է Տաթևի վարդապետարանը: Այստեղ դասավանդել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, երկրաչափություն, թվաբանություն, երաժշտություն: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր են Տաթևի վանքը, Նորավանքը, Վահանավանքը, Յախաց քարի, Մեքենյաց, Շողվազա, Սյունի, Արատեսի վանքերը: 1103թ. սելջուկ-թուրքերը, Չորթմանի գլխավորությամբ, համառ կռիվներից հետո թափանցել են բերդ, ավերել քաղաքը, սակայն հազարավոր սպանվածներ թողնելով միջնաբերդի մոտ՝ նահանջել: Հետագայում Կապանը, աստիճանաբար լքվելով բնակիչներից, անշքացել ու դարձել է ավերակ:

## ԽԱՐԲԵՐԴ

Մ.թ.ա. 9-8-րդ դարերում հայերը հիմնադրել են Խարբերդը: 1070-ական թվականներին Խարբերդում բյուզանդական կայսրի հրամանատարն էր հայազգի զորավար Փիլատրոս Վարաժնունին: Մանազկերտի ճակատամարտից հետո (1071թ.) նա, միավորելով Կապադովկիայի, Կիլիկիայի, Հյուսիսային Սիրիայի և Միջագետքի հայկական իշխանությունները մի պետության մեջ, Խարբերդը դարձրեց մայրաքաղաք: 10-13-րդ դարերում քաղաքը հայտնի էր իր ամուր բերդով: Խարբերդի եկեղեցիներից էին ս. Նշանը, ս. Հակոբը, ս. Ստեփանոսը, ս. Կարապետը: Համազգային հռչակ էր վայելում աստվածաբանական ճեմարանը: Բնակչությունը զբաղվում էր արհեստներով, երկրագործությամբ, առևտրով: 1185թ. քաղաքն անցավ Որդոքյաններին: 1236թ. այն գրավեցին մոնղոլները: 1515թ. քաղաքին տիրեց օսմանյան սուլթան Մելիս Ա-ն: 1915թ. Խարբերդի հայ բնակչությունը տարագրվեց Դեյր էզ Չոր և ոչնչացվեց անպատենբում:

## ԼԱՍԲԻՈՆ

Քաղաքը գտնվում է Տավրոս լեռնաշղթայի Գուգլակ և Այդոս կիրճերը տանող լեռնահովտի կենտրոնում: Լամբրոնի անառիկ բերդը կառուցված է քարաբլրի վրա: 11-րդ դարի վերջին Օշին Գանձակեցին նորոգել ու կառուցապատել է Լամբրոնը և հիմնել Օշինյան իշխանությունը: 14-րդ դարի սկզբին Լամբրոնը բազմամարդ քաղաք էր, որը Հեթումյան իշխանության կենտրոնն էր: Մինչև 18-րդ դարի կեսը բերդի դռան վրա պահպանվել է Կիլիկիայի հայկական թագավորության զինանշանը՝ զույգ առյուծներով, խաչով և հայերեն տառերով, որը մնաց է Կիլիկիայի հայկական պետության թագավորների՝ Լևոն Բ-ի, Հեթում Բ-ի և Լևոն Գ-ի դրամների վրա եղած զինանշանների: Լամբրոնի Սկևռա վանքը Կիլիկիայի հայոց մշակույթի կարևոր կենտրոններից էր: Լամբրոնի հայերը տեղահանվեցին 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ:

## ՎԱՀԿԱ

Քաղաքը գտնվում է Լեռնային Կիլիկիայում, Սարոս գետի վերին հոսանքի աջ ափին: 7-8-րդ դարերում եղել է Բյուզանդական կայսրության կարևոր ռազմական հենակետ՝ Արաբական խալիֆայության դեմ պայքարում: 1097-ին Կիլիկիայի հայոց թագավոր Կոստանդին Ա-ն բյուզանդացիներից ազատագրում է Վահկան և հռչակում իր մայրաքաղաքը: Նրա հաջորդը՝ Թորոս Ա-ն (1100-1129), վերակառուցում է Վահկայի ամրությունները, հիմնում դրյակ, պալատներ և այլ շինություններ: 1137-ին Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսը խոշոր բանակով պաշարել է քաղաքը և գրավել: 1145-ին Վահկան ազատագրել է Թորոս Բ մեծ իշխանը: Նրա եղբայրը և հաջորդը՝ Սլեհը, 1173-ին իշխանության մայրաքաղաքը հռչակել է Միսը և գահանիստը Վահկայից տեղափոխել այնտեղ: Վահկայում գործում էին ս. Հրեշտակապետ, ս. Թորոս, ս. Մինաս, ս. Գևորգ եկեղեցիները և ս. Հովհաննես մենաստանը, որի ս. Աստվածածին եկեղեցու հիմնադրումը վերագրվում է Ներսես Շնորհալուն: Վահկայի բնակչությունը 1915թ. բռնի տեղահանվել է: Նրանց զգալի մասը զոհվել է գաղթի ճանապարհին:

## ՄԻՍ

Քաղաքը գտնվում է Դաշտային Կիլիկիայում՝ Պյունանոս գետի Միս վտակի ափին, որն առաջին անգամ հիշատակվում է 5-6-րդ դարերում: Արաբ աշխարհագրագետների վկայությամբ՝ 8-9-րդ դարերում Միսում գերազանցապես ապրել են հայեր: 1173-ին Մլեհ իշխանապետը այն հռչակել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք: Ունեցել է 20-ից ավելի եկեղեցիներ ու վանքեր, շքեղ ապարանքներ: Միսը եղել է համահայկական խոշոր կենտրոն, որտեղ զարգացած են եղել երաժշտությունը, ճարտարապետությունը: Քաղաքն ունեցել է համալսարան, վարդապետարաններ: Սսի կառույցների մասին հիացմունքով է խոսել ավստրիացի Վիլլեբրանդ Օլդենբուրգցին, որը 1211-1212 թվականներին դեսպան է եղել Կիլիկյան Հայաստանում: Սսի հայ բնակչությունը բռնությամբ տեղահանվել է 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ: Նրանց մեծ մասը զոհվել է աքսորի ճանապարհին, փրկվածներն ապաստանել են հարևան արաբական երկրներում:

## ԵՐԵՎԱՆ

Մ.թ.ա. 782թ. Արարատյան երկրի թագավոր Արգիշտի Ա-ն հիմնադրեց Էրեբունի ամրոցը: Էրեբունի-Երևանը ավելի քան 2786 տարի անընդմեջ գոյատևել է: 1918թ. Սարդարապատի հայտնի ճակատամարտից հետո Երևանը դարձավ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը: Հակառակ երկրի քաղաքական, տնտեսական աննպաստ վիճակին՝ հայ ժողովուրդը ցուցաբերում է զարմանալի կենսունակություն. ուժ է գտնում իր մեջ ոչ միայն պահպանելու անցյալի փառավոր մշակութային, կրոնական կենտրոնները, այլև ստեղծում է նորերը: Երևանի հուշարձաններից հիշատակության արժանի են վերանորոգված ս. Սարգիս առաջնորդանիստ (թեմի առաջնորդն է Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը), Կոնդի ս. Հավիաննես Սկրտիչ, Քանաքեռուտի ս. Հակոբ. Նորագավթի ս. Գևորգ, ս. Ջորավոր, ինչպես նաև՝ Մալաթիայի ս. Աստվածածին, Նոր Նորքի ս. Սարգիս և Գրիգոր Լուսավորիչ նորակառույց եկեղեցիները: Եթե այսօր հարց տրվի, թե ինչն է Հայաստանում առավել շատ հետաքրքրում օտարերկրյա զբոսաշրջիկներին, անվարան կարելի է պատասխանել՝ հայ ճարտարապետությունը:

Ահավասիկ, հայտնի ամերիկացի գրող, նկարիչ, աշխարհագրագետ Ռոբուել Զենտը գրում է. «Երևանի Լեռնի հրապարակը (այժմ՝ Հանրապետության հրապարակ)

րակ) ճարտարապետական գլուխգործոց է համաշխարհային չափանիշով: Եթե հազար բծախնդիր մասնագետ այսօր կազմելու լինեն աշխարհի յոթ հրաշալի հրապարակների ցուցակը, ապա երևանյանը կմտնի դրա մեջ»: Այո, գեղեցիկ է Երևանը, մանավանդ որ այն պսակված է Արարատի և Արագածի թագերով:

## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ընդհանուր կաթողիկոսությունը հիմնվել է 35թ.՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների օրոք, և պատմական ու քաղաքական պայմանների հետևանքով կաթողիկոսի աթոռանիստը եղել է փոփոխական: Այն հաջորդաբար հաստատվել է հետևյալ քաղաքներում.

Արտագու Աթոռ	–	35-301թթ
Վաղարշապատ-Էջմիածին	–	301-484թթ.
Դվին	–	484-931թթ.
Աղթամար	–	931-944թթ.
Արգինա	–	944-992թթ.
Անի	–	992-1065թթ.
Ծամանդավ	–	1066-1105թթ.
Սև լեռ	–	1105-1116թթ.
Ծովք	–	1116-1147թթ.
Հռոմկլա	–	1147-1292թթ.
Սիս	–	1293-1441թթ.
Վաղարշապատ-Էջմիածին	–	1441-ից առ այսօր

Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը հաստատվել է 638թ.՝ արքեպիսկոպոսության տիտղոսով:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը հաստատվել է 1461թ.՝ արքեպիսկոպոսության տիտղոսով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան (1-12 հատորներ, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն)
2. Հայկական համառոտ հանրագիտարան (1-4 հատորներ, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն)
3. Հայ ժողովրդի պատմություն (1-8 հատորներ, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ)
4. Չիթունի, «Հուշիկ Հայաստանի» Կ.Պոլիս, «Հայագիտում» հրատարակչություն, 1919թ.
5. Հ. Սահակ Տեր-Մովսեսեան, «Զննական պատմութիւն հայոց», Վենետիկ, ս. Ղազար հրատարակչություն, 1914թ.
6. Ղևոնդ Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901թ.
7. Ղևոնդ Ալիշան, «Աշխարհագրութիւն», Վենետիկ, 1853թ.
8. Թորոս Թորոմանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երևան (1-2 հատորներ)
9. Մովսես Խորենացի. «Պատմություն հայոց», Երևան, 1981թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք .....	3
«Հայը պիտի ապրի՝ հակառակ դահիճներուն և հակառակ իր առյուծի աչքին տակ բուսած կորեկին».....	6
<b>Մայրաքաղաքներ</b>	
Տուշպա-Վան .....	11
Արգասկուն .....	12
Արմավիր.....	13
Երվանդաշատ.....	14
Սամոսատ.....	15
Եղեսիա .....	16
Արշամաշատ .....	17
Արկաթիակերտ .....	18
Արտաշատ.....	19
Տիգրանակերտ.....	20
Մծրին.....	21
Մծուրն.....	22
Վաղարշապատ .....	23
Դվին.....	25
Բազարան.....	26
Երազգավորս.....	27
Կարս .....	28
Անի.....	30
Ոստան.....	31
Աղթամար .....	33

Սեքսատիա.....	34
Լոռե .....	35
Կապան.....	36
Խարբերդ .....	37
Լամբրոն .....	38
Վահկա.....	39
Սիս .....	40
Երևան .....	41
Հայ եկեղեցու մվիրապետությունը .....	43
Օգտագործված գրականություն .....	44

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)  
Ս 982

**Սուրիասյան Ս.**

Ս 982 Հայոց 28 մայրաքաղաքները / Եր.: Նաիրի, 2005, 48 էջ:

050320913

Ս \_\_\_\_\_ 2004

705(01)2004

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-550-01397-5

© Սուրիասյան Սիլվա, 2005

320

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՀԱՅՈՑ 28 ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան  
Սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան  
Համակարգչային շարվածքը և  
ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 11:  
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ  
Երևան-9, Տերյան 91

Հայաստանի Ազգային գրադարան



N10422430

15616